



ՀԱՅԲԱՐԱՐԵՐԹ

ՀԱՅԲԱՐԱՐԵՐԹ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 168

10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1914


ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՏՕՒԱՑՈՅՑ

- | | |
|---|---|
| <p>Հոկտ. 11 † Կիր. դձ.</p> <p>12 Բշ. դկ.</p> <p>13 Գշ. աձ.</p> <p>14 Դշ. ակ.</p> <p>15 Եշ. քձ.</p> <p>16 Ուր. րկ.</p> <p>17 Շք. զձ.</p> | <p>Ե. Զկնի հաշին:</p> <p>Դիւս ճշխարաց Ս. Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսի, եւ Ս. Հարցն Թաթլոյ, Վարոսի, Թովմասու եւ Կրօնիդեայ եւ եօթն խոտանարակացն:</p> <p>Ս. Անանիայ առաքելոյն եւ Ս. առաքելոցն Մասաթեայ, Բառնաբայ, Փիլիպպոսի, Յովհաննու, Շիլայի եւ Սիդուանոսի, գործակցացն Պօղոսի: Եւ երկոսասան վարդապետացն:</p> <p>Պահոց:</p> <p>Ս. Դիոնեսիոսի Արիսպագացւոյն եւ Ս. առաքելոցն Տիմոթէոսի եւ Տիտոսի եւ այլոց առաքելացն Պօղոսի:</p> <p>Պահոց:</p> <p>Ս. Աւետարանչոցն Մասթեոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու: Եւ Դուկիանոսի քահանային եւ Ս. վկայիցն Տարագոսի, Պրոքոսի եւ Անդրոնիկոսի: Եւ Պեղագեայ կուսին:</p> |
|---|---|



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԱԹ-Ա.Թ-ԵՐԹ-

Զորրոդ տարի 10 Հոկտեմբեր 1914 թիվ 168

Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթերը օգուտնակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճան կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանքաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթերը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները:

Նամակ Կարդ. Մերի տէր Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ.Դ. Թերզեմա Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ.
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուանամարաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ԴԱՍԱԹԻԱՐԱԿԱՆԻԹԻԻՆ

ՀԱԼԷՊԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՆ ԱՌՔԻԻ

Գ.

1. Դաստիարակութեան ամենակարեւոր ինդըրոյն մէջ եպիսկոպոսաց բնական օգնականներն են քահանաները, որոնց համար նոյնքան կը զօրեն Բրիտանիոյ հրամանները, իոգէտներուն սորվեցնելու, խաւարեալները լուսաւորելու, տկարները հաստատելու, մանկութիւնը

դաստիարակելու, և Աստուծոյ պատրաստելու ընտիր ժողովուրդ կազմեալ: Այդ փափուկ տունները պիտի ջրեն ու մեծցընեն այն օծեալ ու վարժ ձեռքերը, որ պէս զի վերջը ուրախանան անոնց գեղեցիկ ու համեղ պտուղներովը:

Ս. Եկեղեցւոյ մէջ ամէն ժամանակ լաւ ըմբռնած են քահանայք իրենց այս աստուածատուր ու սրբազան պաշտօնը. անոր համար ո՛չ միայն հոյիւր և հաշր անուանուած են, այլ և առհասարակ կը կոչուին՝ Վարդապետ, որ է՝ ուսուցիչ: Իրենց այս պաշտօնը սակայն՝ ներկայ ժամանակիս մէջ արտակարգ կարեւորութիւն մը առած է. իրենց այս աստուածակարգ պարտքը, զարդիս ամենամեծ

համեմատութեան հասած է: Քանի կը ճգնի դժոխային առիւծը բզբտել ոչ խարները, ա՛յնքան հովիւն քաջ պէտք է կրկնապատկէ իրաչալուրջ հսկողութիւնը: Եւ այս պարտքը կատարելու մէջ պէտք է օրինակ առնունք նոյն իսկ թշնամիներէն: Քրիստոս Տէրն Մեր անիրաւ Տնտեսին՝ զոր իր տէրը գովեց իմաստութեամբ գործելուն համար, օրինակաւն իսկ յորդորեց զմեզ բարիք գործելու: Արդ, ի՞նչ կ'ընեն թշնամիք հաւատոյ ու եկեղեցւոյ. մանկութիւնը կը քեցեն իրմէն, մանուկները կը պատրաստեն որդիս ապստամբութեամբ յորս ընդմեջ է սատանան և անոր անհաւատ սկզբունքները և անբարոյութիւնը:

Ամբողջ եւրոպիոյ, և կրնա՜նք ըսել, ամբողջ աշխարհի Կաթողիկէ կղերը աստուածային եռանդով բորբոքած, զարհուրելի պայքար կը մղէ չարութեան ոգւոյն դէմ, անմեղ մանուկները պահելու համար եկեղեցւոյ, Յիսուսի Սուրբ Սրտին, Աստուծոյ: Ամբողջ աշխարհի մէջ երամ երամ կը տարածուին Միսիօնարներ, ազնուատոհմ երիտասարդ քահանաներ, մաքրափայլ ու փափկատուն կոյսեր, զոհելով իրենց հանդիստը, հաճոյքը, հարստութիւնը, ազնուականութեան անունը և պերճութիւնը, զոհելով իրենց ծաղիկ հասակը, առողջութիւնը, կեանքը. ինչո՞ւ. Քրիստոսի շահելու համար այն փոքրիկները, զորոնք աստուածային Փրկիչը ա՛յնքան սիրեց: Տեսնուած չեն երբեք աշխարհակալ բռնակներ, որոնք ա՛յսչափ դարեր, ա՛յսչափ հեռու, ա՛յսչափ զոհողութեամբ փնտռած ըլլան բարիք, փառք և տէրութիւն և իշխեցողութիւն, որքա՛ն այս

սրբազան բանակները՝ որոնք կ'երթան, կը վազեն, կը թռչին Քրիստոսի փառքը փնտռելու համար, Քրիստոսի գործը կատարելու, Քրիստոսի շահելու համար մանուկները... ամէն կերպ զոհողութեամբ ու վշտամբերութեամբ:

Արդէն իրենց հայրենեաց մէջ հրաշալիքներ կը գործեն անոնք: Ուսեալ, ազնուական, անշահախնդիր կղեր մը, անթուելի բազմութեամբ, անձնազոհ յարատեւութեամբ դաստիարակութեան նուիրուած են ամբողջովին: Անհամար դպրոցներ կը հաստատեն, առանց փոխարինութիւն մը աւելակելու. գիշեր ցերեկ, ամառ ձմեռ անձնատուր այս տաժանելի գործին. իրենց հաճոյքը, իրենց կեանքին վախճանը, իրենց գերազանձ գաղափարական ըրած են դաստիարակութիւնը: Յամառօրէն, մեթոտիկ կերպով, ահեղօրէն, անողոր հաստատամտութեամբ կը մրցին չարին դէմ, չար դպրոցներու դէմ, հերետիկոսներու, բողբոքականաց, անկրօններու դպրոցներուն դէմ. յուսահատութեան կը մասնեն զանոնք: Պետութիւնը, ինչպէս ի Գաղղիա, կորակոր արթնապարտ կը յաղթահարի. ի զուր կը ճգնին անոնց աստուածամերժ պաշտօնեաները, վարժապետները. ամուլ են՝ ամուլ, իրենց կատաղի ճիգերը. անէծք են՝ անէծք, իրենց ժողված պտուղները. անէծք՝ այն հայրենիքին, որոյ անբարոյ հիւժախտաւոր և ոճրագործ նոր սերունդը կ'երթա՛յ ու կը մարի... մինչդեռ Կաթողիկէ կղերը կը հասցնէ կայտառ, բարոյալից, յուսատու, նորաբողբոջ և քաջ սերունդ մը:

Այդ հրաշալի կղերը չի լքաներ եր-

բեր իր գործը. իր գործը՝ ինչպէս մանուկներու հետ, նոյնպէս նաեւ երիտասարդաց հետ է, նոյն իսկ յարբուս հասածներու հետ, նոյն իսկ գործաւորաց ստուար և ոտորին խաւերուն հետ: Առ այս ուղղուած են Քրիստոնէական Վարդապետութեան այլեւայլ հաստատութիւններ, երիտասարդութեան անթիւ անհամար ընկերակցութիւններ, եղբայրութիւններ, տեղւոյ, ազգի, սովորութեանց և միջավայրի յարմարցուած առ այս ուղղուած են գործաւորական միաբանութիւններ, համախմբումներ: Մեղուաջան իրարանցում մը, մեղու խորիս պատրաստելու համար Քրիստոսի կաթողիկէութիւնը անթիւ, միշտ նոր և միշտ կենսաբաշխ միջոցներ կը մատակարարէ այս հիմնադրի մշակներուն:

Այս վախճանով կրօնաւորական հաստատութիւններ կանգնուած են, և արդէն ամէն կրօնաւորներ այս վախճանիս կը ծառայեն. կաթողիկէ, ճշմարիտ կաթողիկէ երիտասարդութիւն հասցնել. Տըլասալ մը՝ Քրիստոնէական Դպրոցներու Ներքոյ միութիւնը կը հաստատէ. Յիսուսեանք զափնիներ կը խլեն այս ասպարէզի մէջ, հաշածանօք հանդերձ: Տօն Պողոս մը բացարձակապէս սրանք լիւրքներ կը գործէ, և իր Սալէզեանները պետութիւններու սերունդներ կ'երջանկայնեն: Տէ'ր Աստուած, ի՞նչ գործունէութիւն, ի՞նչ եռանդ, որպիսի անձնութեանցութիւն, ի՞նչ զարմանալի յարատեւութիւն:

Աստուծոյ գործն է այդ, և պէտք է բարգաւաճի: Բնաւ պէտք չէ յուսահատիլ. այլ հօրկ է գործել, միշտ գործել: Բնաւ հիարծել, աննշան չհամարել այդ գոր-

ծը, որչափ ալ համեստ շրջանակի մէջ ըլլայ: Դիւզի մը խեղճ ժողովրդապետը քանի մը գիւղացի տղայոց զբաղելով, կրնայ շնորհիւ Աստուծոյ անհամար օգուտներ ձեռք բերել: Սակայն պէտք է անվհատ աշխատիլ, յարատեւութեամբ աշխատիլ, մանաւանդ զոհողութեամբ աշխատիլ: Քահանայական կեանքին ամենէն ազնիւ, ամենէն շնորհալի, արդիւնաւոր և աստուածահաճոյ գործն է տղայոց դաստիարակութիւնը: Հիմակուան քաւոնք պատեւազմը աս է. անով է որ քահանան Քրիստոսի հետ պիտի կարենայ ըսել. «Զգործսն կասարեցի, գոր ետուր ցիս, զի արարից»։ Եւ ապա պիտի կարենայ յաւելուլ. «Եւ այժմ փառաւորեալ զիս, Հայր, առ ի ի՛նչ փառօքն»։

Ստոյգ է սակայն որ ամէն մէկը միեւնոյն յարմարութիւնը, տաղանդը, կոչումը չ'ունենար դաստիարակութեան գործին մէջ: Անոնք որ մասնաւորապէս յատկութիւն ունին անոր, յիշաւի մեծամեծ օգուտներ կը գործեն. երբեմն ամբողջ քաղաք մը կերպարանափոխ կ'ընէ յարմար և անձնազոհ քահանայ մը. իսկ եթէ քանի մը այսպիսի ազնիւ կոչում ունեցողներ ձեռք ձեռքի տան, ո՛հ, որպիսի անպատմելի բարիքներ պիտի կարենան ընել, դպրոցներ ստեղծելով և կառավարելով: Բա՛րէ, ո՛րքան պէտք ունի, սափազակա՛ն պէտք ունի հասարակութիւնս՝ այսպիսի կոչումներու, անձնազոհութիւններու: Մեր խեղճ մանկութիւնը անօթի թրուշնիկներու կը նմանի, կերակուր կը սպասէ: Այս զոհողութիւնը մեր մէջ դեռ լաւ չ'ըմբռնուիր. գործին վսեմութեան, կարեւորութեան, սրբութեան ուշադրու-

թիւն չիդարձուիր: ո՛րքան տիրած է մեր վրայ միջավայրին հեղգութիւնը. ո՛րքան ժամեր ի զուր կը վատնուին, կը կորսուին անօգուտ պարնպութեամբ, ժամեր՝ որոնք գանձեր կրնային արտադրել: ... Բա՛րէ, պէտք է ցանել ու ցանել, որպէս զի կարելի ըլլայ հնձել անձնուրացութեամբ, քրիստոսոնման հաճոյքով և յարատեւութեամբ ցանել, մի՛շտ ցանել... յոգնելով, վաստակելով, պարտասելով, առանց վարձքի, առանց մխիթարութեան, առանց դրոշմանիքի, առանց խրախոյսի, մերթ ևս կրելով հակառակութիւն, նախատինք, յանդիմանութիւն, հալածանք, ստէպնոյն իսկ իր աշխատանքին պատուը չը տեսնելով. «զի այլ է որ սերմանէ, եւ այլ է որ հնձէ». դէտակն կտրեալ մեր բռնեռային աստեղ, Յիսուսի, որ կը տեսնէ, կը մօտեարէ, կը խրախուսէ, որ պիտի վարձատրէ ամբողջօրէն: Ա՛հ, այն ատեն մէն մի մանուկ մէն մի յաղթանակ, մէն մի մրցանակ պիտի ըլլայ յաւիտենական:

2. Բայց, պիտի ըսուի, միջոց պէտք է: Միջոցը, այս իմաստով, դժրամ է:

Քրիստոս և Առաքելք բնաւ դրամի խօսք չըրին, երբ խնդիրը հողույ փրկութեան և ընդդէմ չարին պայքարելու վրայ էր. «Ես կերակուր ունիմ, զոր դո՛ւք ոչ գիտէք... իմ կերակուր ալն է... զի կասարեցից զգործն նորա»: Խօսքն ըրին սակայն անձնուրացութեան և զոհողութեան և անոնցմով Ս. Եկեղեցւոյ մէջ անհատնում պանշելիքներ կատարուեցան: Արդէն վերէն մինչեւ այժմ մեր ըրածներն ալ այս սկզբունքին վրայ հաստատուած են: Այն մեծերը զորս յիշեցինք, ունեցածնին ալ վրայ տալով իրենք զիրենք զոհեցին:

Բայց «Ոչ ամենեկին բառարան են աչքը բանի». այլ առհասարակ «Արժանի է մշակն վաճառ խոյ»: Եւ յիրաւի, օրինաւոր, արդիւնաւոր ու տեսական հաստատութեան մը համար պատշաճ և բաւական միջոցներ պէտք են. դիւցազնական առաքինութիւն ո՛չ կը պահանջուի ո՛չ կը գտնուի միշտ: Արդ ի՞նչպէս ճարել միջոցը, մանաւանդ այս խեղճ հաւատարմութեան մէջ:

Եւ յիրաւի, օրինաւոր, արդիւնաւոր ու տեսական հաստատութեան մը համար պատշաճ և բաւական միջոցներ պէտք են. դիւցազնական առաքինութիւն ո՛չ կը պահանջուի ո՛չ կը գտնուի միշտ: Արդ ի՞նչպէս ճարել միջոցը, մանաւանդ այս խեղճ հաւատարմութեան մէջ:

Եւ յիրաւի, օրինաւոր, արդիւնաւոր ու տեսական հաստատութեան մը համար պատշաճ և բաւական միջոցներ պէտք են. դիւցազնական առաքինութիւն ո՛չ կը պահանջուի ո՛չ կը գտնուի միշտ: Արդ ի՞նչպէս ճարել միջոցը, մանաւանդ այս խեղճ հաւատարմութեան մէջ:

Նախ ընդհանրապէս դիտել կուտանք, որ աստուածային ու բնական իրաւունքով տղայոց դաստիարակութեան գործոյն մէջ ամենագլխաւոր մասն ունին նաեւ ծնողք, որոնք ոչ միայն պարտական են իրենց զաւակները Աստուծոյ երկիւղին մէջ և քրիստոնէաբար մեծցընել՝ անոնց անտիական տարիներէն սկընած, այլ նաեւ պարտք ունին ամեն զոհողութիւն ընել անոնց դաստիարակութեան համար՝ դպրոցներու մէջ:

Արդ մեր քով ծնողք յայսմ մասին մեծապէս անհոգ են և անտարբեր: Դիտեցէք ու պիտի տեսնէք. ամէն բանի համար դրամ կայ, պետական այլեւայլ տուրքերու, բնակութեան, դիւզազնացութեան, ապրուստի, թատրոնի, ամէն տեսակ քմահաճոյքի, մինչեւ իսկ անիծեալ նորաձեւութիւններու (մօսա), որոնք մեզք կը ծնանին. այլ զաւակ դաստիարակութեան համար մեծ բան մը կը սեպուի եթէ ծնոնց տասնին մէկը, ի՞նչ կ'ըսեմ, քսանին, երեսունին մէկն ալ ծախսուի: Ընդհանրապէս կը կտրծուի

թէ իրենց տուած ոչինչ դրամով դդաստիարակները կ'երջանկացնեն, ինեա կ'ընեն, դաստիարակները, որոնք՝ երբ ըստ արժանւոյն կատարեն իրենց պաշտօնը, ճշմարիտ բարերարները կ'ըլլան մարդկութեան, վրայ ապով իրենց կեանքը: Դարձեալ մեր մէջ ծնողքներ կան, որոնք օտար դպրոցներու համար բնաւ զոհողութիւն չեն խնայեր, իսկ ազգային դպրոցներու համար ուշտ, խստապահանջ և միշտ քննադատ են: Այս բաները ժողովրդեան մը բարոյական և քաղաքակրթական չափանիշերն են: Ո՛րքան ցաւալի և ամեթալի վիճակ:

Յեւրոպա զաւակաց կրթութիւնը առաջին տեղը կը գրաւէ. անոր կը զօհուի ամէն բան. և ահա ատոր համար կը բարգաւաճին դպրոցներ: Հաւատալիքալի պետական դպրոցական տուրքէն զատ, ծանրածանր հանգանակութիւններ կը վճարեն ազատ դպրոցներու համար:

Պիտի ըսէք թէ՝ Ունին և կու տան:— Շատ լաւ. ես ալ պիտի ըսեմ. թէ՛ Մենք ալ ունինք և չենք տար: Բացարձակ ճշմարտութիւն է այս: Ամէն ժողովուրդ ըստ իւր չափուն պէտք է տայ, քանի որ ամէն բանի դրամ կը գտնէ: Մենք չտալու վարժուած ժողովուրդ մըն ենք, դժբախտաբար: Բայց գոնէ հոգեհաստոր հարազատներու համար բացառութիւն մը ըլլուէր. արտասուելի է այդ վիճակը: Հարուստը չի տար, միջակը չի տար, աղքատը չի տար, և ի՞նչպէս կ'ուզէ որ դպրոցները ծաղկին: Օտար դպրոցները կը ծաղկին, բնականաբար. բայց ի՞նչպէս վճարել կու տան անոնք: Ըստ սերման և պտուղ:

Այս մասին վրայ պէտք է դարձնել

ամէն ուշադրութիւն. ամէն կերպով պէտք է աշխատիլ որ մեր այս ժողովուրդը գիտնայ և գործադրէ դաստիարակութեան հանդէպ ունեցած իր պարտքը. պէտք է ընկերակցութիւններ, եղբայրակցութիւններ կազմել, մանաւանդ բանիմաց աշխոյժ երիտասարդներէ: Պէտք չէ արհամարհել ինչը, կաթիլ կաթիլ լինէ կ'ըլլայ, կ'ըսեն: Եւրոպայի մէջ հանգանակուած միլիոնները առ հասարակ աղախիններու քաւնոցներով կը ոտուարանան: Երջանկայիշատակ Գլըմըզեան Յովսէփ Վ. յԱնկիւրիա շաքաւապահ քաւնոցի դրութիւնը մոցուցած էր՝ մեր տղայութեան. տղայոց մեծամասնութիւնը աս չնչին տուրքը ուրախութեամբ կը վճարէին: Իմաստուն վարչութեամբ աճեցաւ գումարը. գեղեցիկ դպրոց մը շինուեցաւ, եկամուտներով: Բայց մեր քով ուրիշ ցաւալի թերութիւն մըն ալ կայ, անհետեւակաւ ուրիշ. շարունակութիւն պէտք է...

Ասոնք բոլոր ի նկատի առնելով և նախախնամութեան ապաւինելով, պէտք է սկսիլ. սկսողը արդէն ճամբուն կէտն է: Լաւ սկսողին Աստուած երբեք չի պակսիր,

Յառաջիկայ յօդուածով պիտի խօսինք ճշմարիտ կաթողիկեայ Դաստիարակութեան և անոր բարերար հանգամանաց վրայ:

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍ (*)

Յ Օ Գ Ո Ւ Զ Ո Ւ Ն Ժ Ը Պ Ա Պ

Յիսուս Բրիստոսըն հայաբնուն ճեղգելաւե
նէրիճէլէրի. — Օ յիւնեայա քէնի «Ճի-
զիօնիսիսիսի քէլսիս էլէլէրէք յիւն-
եայք եկնի պիւ հայաքա կէթիւմիօ
օր:

(Տեղամի)

Ինքան էվլատընըն հիւսնիսին խաթթլա-
րընտան պիրի տէ ծնուն մէհապպէթինին ու-
մուսի վէ ումուսա շամիլ օլմասը վէ Յիսուս
հազդընտա պիր թէսավվուր բէյտա իթմէք
իլին, մութլազա պիւթիւն ալէմի իհաթա
էլլէմէք իւզրէ ծնուն խաչ իւզէրինտէ դօլ-
լարընը կէրմիշ հալինէ նազար իտիւմէք լա-
զըմ կէլմէսի հասէպիլէ, արթըզ միլիլէթ
իսթիհքեամլարը աիւշէրլէր. վաթանլար, ին-
սանըն գալպինէ սէվկիլի օլմազլա պէրապէր,
արթըզ հալը ինհիսարտան տիշարը չըգարլար.
տէնիզլէրին հէր թարաֆընտա ֆէնէրլէր ետ-
նար, գարասա օ էսկի ալէմին կէմիզէտէ-
լիքաէն իսթիֆատէ էլլէտիլի գարալարտա,
արթըզ փաշինն քէլիմէսի հիւթիւմսիւզ գա-
լըր, պէշէրիլէթ եանի մէնֆաթ վէ լիսան
նօզթայի նազարընձա պիրպիրլէրինտէն այրը
պիլէ օլալար, եինէ տէ տաղլար վէ տէ-
նիզլէր իւզէրինտէն քէնտիլէրի, հիշ աէլիսէ
ըրգ, իման վէ մէհապպէթ բապըթալարըլա
եէկտիկէրլէրինէ բապթ էլլէյէն պիր ուխուվ-
վէթ ճիւմհուրիլէթի տօղար:

Տահա պու պիր մուգատտէմէտէն պաշգա
պիր շէյ աէլիլ տիր. Պունըն պիւսպիւթիւն
ալլահանի ճիհէթի տէ վար տըր. իշթէ Յի-
սուս Բրիստոսուն հիւսնիւնիւն ճէմիլէթի
հազըրէյէ թէվսիմ էլլէտիլի խաթթը թապ-
տար պունտա տըր. Պու կիւնքի ճէմիլէթ,
Յիսուս Բրիստոս կիպի պիր նէվ նամիւթէ-
նահիլիլի հայիզ տիր, էօլիւլէմէյօր, գաթիէն
պիր շէյ իլէ մէմուուն օլուպ գալմայօր. Զա-
թէն օնըն թէրազգընըն մէնշար օլան պու
հալ քէնտիլին շէրէֆ ու հիւսնիլի թէշթիլ
էլլէյէն ճիհէթ տիր. էսկի ալէմէ պիր նա-
զար էլլէ, իշթէ օրատա հէր շէյ քէնտի ճին-

սինտէ միւքէմէլ տիր. Հէր քէս թապիա-
թընըն իլհամը արգասընտան կիտէրէք, քէն-
աի իտէալընը մէվպիլ իճրայա վաղ էսիյօր
վէ թէսավվուր իթտիլի էլիլիլի վէ կիւզէլ-
լիլի թաթպիլ իտէպիլիլիլի. Հալպու քի հէ-
նի ալէմտէ քեամիապ օլընամայօր. Հէր քէս
քիմէնին օնա վասըլ օլամամասընը կէօր-
տիւլիւմտէ խայալի տէմէյէ մէհպուր գալ-
տըղըմ պիր կիւզէլլիլէ տօղրու աթըլըյօր վէ
ծնուն վուսլէթի հիշ պիր ճանա միւլէսսէր
օլամասըղընտան, հէր քէս տահուար շէրի-
յօր. էսկի ալէմին աքսի սէտասընը պիր տիյ-
նէյին. իշթէ սանաթթա, ֆէլլէֆէտէ, շի-
րոտէ պէօյիւք պիր մէմուունիլէթ ու շաուիւ-
մանի նիտալարը իշիտէճէքսինիլ, չիւնքի օ,
կիւզէլի պուլմաղա, օնը թաթպիլ էլլէմէյէ
միւլէֆֆապ օլմասընտան նաշի մէսուտ տըր.
Նէնի ալէմին ուզուն հասրէթի վէ լահէն-
գաթ ըէֆ էլլէտիլի ալապէի ահուզար իտէ
պունըն թամմ աքսինի իսպաթ իտէր. «Ահ,
քեաշքի հիւսնի մութլազա վասըլ օլապիւ-
սէյտիմ. ահ, քեաշքի կիւզէլլիլի, էլիլիլի,
գուտսիլէթի քէնտիմտէ պուլոււնտըրապիլտէ
խտիմ»:

Էսկի ալէմ քէնտի մապէտլէրինի, հէյ-
քէլլէրինի, միւշէրրէֆ մանգուլէրինի գա-
թի պիր սուրէթտէ ինշա ու ինշար իտէր-
լէրտի, չիւնքի քէնտիլէրճէ արթըզ օնտան
իլէրիսինի արամապ ապէսլէ ուղրաշմապ գա-
պիլինտէն իտի. Նէնի ալէմ իտէ, նէ սանա-
թթընտա, նէ ֆէլլէֆէսինտէ նէ նազմընտա
հիշ պիր էսէրէ հատտը նիսապա էրմիշ նա-
գարըլա պազամազ, չիւնքի օնուն բուհըն-
տաքի իտէալ հէր տիւրիւ թէսավվուրըն
խարիճինտէ տիր. իշթէ Բարթէնօն կիւզէլ-
լիլին տէրէճէյի նիհայէսինէ վասըլ օլմուշ
օլանըն պիր էսէրի մէմուունիլէթի տիր. Բօ-
լօնիանըն պէօյիւք Բիլիտասը իտէ, նա մահ-
տուտ պիր մուհապպէթին էսէրի նաշիլիլի տիր,
պու սէպէպտէն տախի նաթէմա գալմը
տըր. Յազաթ իթմամը նամըլ գապիլ օլա-
պիլիլի, նէրէտէ վէ քիմ թարաֆընտան իթ-
մամ իտիլէ պիլիլի, սօն թաշը նէրէյէ գօմա-
լը տըր. հէմ, սօն թաշ մը, հօգ տըր վէ
օլամազ տա. Պու ալէմտէ գալտըղձա հիշ

(*) Յես թիւ 161, էջ 538.

պիր շէյ իշուն «իշթէ պու էսէր րէսիտէյի քէմալ օլմուշ տըր» տէնիլէմէզ :

Հօմէրին էսէրլէրինտէ , մէրթէպէյի իւս- հիյէթէ իրֆա իտիւմիշ օլան Կահրամանլարն զարիւյ թէսավժուրլարնը հէր վաղըթ իշին պէն պիր թէսաճիւպլէ սէյր իթմիշիմ : Օն- լար թաճ պաշտա , հէր տիւրլիւ միւքես- ֆաթլարլա թալթիյֆ իտիւմիշ պիր հալաէ էյիզէ օվալարնտա պուլունույօրլար , մա մաֆիյս պախթիյար տէյիլ տիրլէր , իզհարը էսէֆ իթմէքտէն կէրի տուրմայօրլար : Սէ- պէպի էսէֆլէրի տէ նէ՝ տիր , պիլիօրմուսը- նըզ , Թէրք էյլէմիշ օլտուգլարը շու տիւնեա , պու տիւնեանըն նուրը վէ հայաթը տըր : Հէր նէ գատար պէօյիւք տէ օլտալար , եինէ քէնտի քէնտիլէրէ արթըզ կէօլկէտէն պաշ- գա պիր շէյ տէյիլ տիրլէր նազարըլտ պազը- յօրլար : Օնլար իշին նուր , կիւզէլիք , հա- յաթ հէրսի պու տիւնեատա տըր , կէօլկէ իտէ , օ պուլունուտուգլարը ալէմի պալատէ տիր : Տիյնէյին պիր օնլարը , Տիյնէյին Աշիլի , աճէպա տահա երւքոնք պիր հայաթա ար- զուքէշ մի տիր , իսայըր : օ քէնտինին պիր վազըթ մայիք օլտուզը գուվէթ վէ գուտ- րէթինի զայիպ իթմիշ օլտուզընա թէէսիւֆ իտիյօր : Տիկէրլէրինին քեսաֆֆէսի տէ Աշիլ կիպի վէ Աշիլին հիտալաթընտա տըրլար : Էյ պէտպախթ կէօլկէր , պիւթիւն ստա- տէթլէրի , թէրք էյլէմիշ օլտուգլարը շու ալէմին զի հայաթ էրվանը արաւընտա տօ- լաշմազտան իպարէթ պուլընտուզընտան , տալիմա , թարիք օլտուգլարը շու տիւնեա- յա միւթէվէճճիս պուլունարազ եաշարլար : Պիզ իսէ , պիլ աքս , Յիսուս Բրիտտուն թէէ- սիա էյլէտիլի շու եէնի ալէմտէ , իսիզաթըն վէ սանաաթըն հէր տիւրլիւ ճազիպէտար շաշալարը արտաընտա գաթիէն տիլսիյր օլամայօրուզ : Կէօրտիւլիւմիւզ պիլճիւմէ կիւզէլիքլէրին ֆէվպինտէ պիր կիւզէլիյէ հասրէթքէշիլ վէ պու տարը տիւնեատա օնա նայիլ գապիլ օլամաաղընտան , մէյուս օլուպ տուրույօրուզ : Տարը ախրէթաէ , ճէննէթի իւլիատէ պիլէ սնճազ քեսալիպ օլապիլէ- ճէյիզ : Օրատա հէր նէ գատար տա նուրտան նուրտա իրթիզա իտէճէք իսէք տէ , տալի-

մա տահա կիւզէլ պիր շէյ արայաճաղըզ , պու կիւզէլիյէ տօղրու օլան շէվգիմիլ , աթշանըմըզ պապի դալաճազ , ֆազաթ հիշ պիր աճը տույալաճաղըզ , չիւնքի լաէն- գաթ օ պիղտէ հասըլ օլան սուսուգլուզ , անինտէ գանաճազ տըր : Իշթէ եէնի ալէմին ինսանլարընն ֆիքրի պու տուր քի , արթըզ թամմ հէտէֆինէ մաթուֆ պուլընյօր :

Արթըզ հազընտա ֆազլա իսրար իիմէք իսթէմէտիյիմ թարիխին պու պէօյիւք մէն- գարէսի , էլպէթթէ ֆէվգ էլ առէ պիր վա- գաա նէթիճէսի օլմազ իզթիզա իտէր քի պու գատար ազիմ պիր թէհավիլիւէ վիւ- ճուտ վէրէպիլմիշ տիր : Էլպէթթէ էսկի տ- լէմին պիթմիշ վէ եէնիսինին պաշլամըշ օլ- տուզը պիր տէ՝մ օլմալը տըր : Բուհլարը պու եէնի իսթիպաթէթ տօղրու սէվգ էյլէյէն պիր շէյ օլմուշ օլմալը տըր : Նէ՝ տիր պու տէմ : Նիհայէթի օլմայան պու իլք խաթվէյի թէ- րազըզ հանկիսի տիր : Պու թարիխի քիմ աշ- մըշ տըր : — Պուլարա եալընըզ պիր ճէ- վապ վար տըր — Յիսուս Բրիտտոս , էսկի ալէմին նիհայէթ պուլմաաը , իշլաաքեարըն խաշընտան իթիպարէն տիր , եէնի ալէմին տէ թարիխի թէէսիւսիւ թամմ օ թարիխ- տէն պէտ էյլէր : իսաշ , ալէմէյի ինզըրազ ու ինհիթաթըն նօղթայը թէվապուֆը , հալպու քի տէվրէյի թէճճէտաիւտիւն տէ մէպտաը տըր : Պու հալաէ , Յիսուս Բրիտտուն Ալլահ : լըզը գապուլ իտիլէէք օլուրտա , հէր շէյ սնլաշըլըր , մանա գապուլ իտէր : Նօզ շալէտ Յիսուս Ալլահ ալէիլ տիր տէ պիր պիւթիւ- րէսթիւք եէրինէ տիկէր պիր պիւթրէրէթիւք իգամէ իթմիշ , եալան ոէօյլէմիշ վէ պու եալա- նը եալիօտ սլտաաղընըլը սալէսինտէ տիւն- եալը թէճաիտ էյլէմիշ տէնիլէճէք օլուրտա , արթըզ պէն պուլունան հիշ պիր շէյ սնլաշտ- մամ : Արթըզ հազիպաթ , եապին , տաալէթ , ֆազիլէթ վէ հաթթա , միւսէպպիպ իլէ ա- տարը հազընտա օլան ֆիքրիմ գարմապարըշ օլուր վէ Ալլահա տալիյր օլան թէսավժու- րըմ տա պիր բէրտէ իլէ մէթուր գալըր : Զա- թէն նաթըլէնըն տա տէտիլի պու տըր : Ճի- հայէթ , իշթէ պէնիմ սօն պիւրհանըմ շու տըր քի , շալէտ պիր ինսան , Ալլահըն իս-

մինի դասպ իտէրէք, քէնտի քէնտիսինի Ալ-
լան գապուլ իթտիրմէք կիպի միւհիմ ֆիքրի
պու գոտար պէօյիւք պիր միւլէֆֆադըյէթ-
լէ պաշա չըգարապիւմիշ իսէ, արթըզ կէօյ-
տէ Ալլան եօզ տըր»։ Պէն տէ շուշը իւսվէ
իտէրիմ քի, էյէր պիր ինսան, Ալլանըն իս-
մինի դասպ իտէրէք վէ տիւնհայը վահի պիր
պիւթըրէսթլիք իշինտէ դարգ էյէյէրէք պու
տիւնհայը թէճտիւ վէ ինհա իտէպիւմիշ իսէ,
արթըզ կէօյտէ Ալլան եօզ տէմէք տիր։

(Մապասի վար)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ՝ ԳՐԷՆ

ԳԻՐԷ Ա. — ԴԼ. ԻԳ. — Մահուան մտածութեան վրայ
(Շար.)

Աղէ՛, ո՛վ ամենասիրելի, ո՛րքան մեծ վսանգի պիտի
ազատես զեզ, ո՛րքա՛ն մեծ երկնդէ պիտի ձողապրիս,
եթէ միայն միշտ վախճաւ ու կասկածիս մահուընէ։

Զանա՛ հիմա այնպէս ապրիլ, որ մահուան ժա-
մուն կարենաս աւելի ուրախանալ քան վախճալ։

Սորվէ՛ հիմա մեռնիլ աշխարհի, որպէս զի ան
ասեմ սկսիս ապրիլ Քրիստոսի հետ։

Սորվէ՛ հիմա ամեն քան արհամարհել, որպէս զի
ան ասեմ կարենաս ազատեալ առ Քրիստոս դիմել։

Պատժէ՛ հիմա մարմինդ սպաշխարարեալք, որ-
պէս զի ան ասեմ կարենաս սոյոգ սպառնդութիւն ու-
նենալ։

ՍՈՒՐԲ ԲԵՆԵԴԻԿՏՈՍ

Նախահայր արեւմտեան վանականներու

Հրաշքները, զորս Ս. Բենեդիկտոս Աստուծոյ օգ-
նութեամբ կը գործէր, զինքը ամենուրեք պատկառե-
լի կ'ընծայէին և իրեն բացարձակ իշխանութիւն մը
կու տային իր կրօնաւորներուն, շրջապարեւը բնա-
կիչներուն և նոյն իսկ բարբարոսներուն վրայ։

Տոտիդա, Գլթաց թագաւորը, որ Սուրբին տղջե-
լութեան եկած էր, պատկառանքով գրաւուեցաւ
զանիկայ տեսնելուն պէս։ Հեռուէն ծուռը գրաւ ա-
նոր առջեւ, և չհամարձակեցաւ ոչ յառաջանալ ոչ
ալ ոտքի ելլել։ Ս. Բենեդիկտոս սուրբ ազատու-
թեամբ մը խօսեցաւ այս թագաւորին հետ, որ ամ-
բող իտալիան կը սասանեցնէր։ Զանիկայ յանդիմա-

նեց զորժած ոճիրներուն համար և մարգարէացաւ
անոր կեանքին վերջին արկածները։ Դուն շատ չարիք
կ'ընես, ըսաւ անոր, շատ չարիք րած ես։ Ժամանակ է
որ վերջ տես բոլ անօրէնութիւններուդ։ Հռոմ պիտի
մտնես, ծովը պիտի անցնիս, ինք ճարի պիտի թագաւո-
րես, ասաներուդին՝ պիտի մեռնիս։

Տոտիդա այս պատգամը լսելուն պէս նոր ահաւ-
գողով մը լեցուեցաւ։ Թախտիկապէս յանձնեց ինքզին-
քը Սուրբին աղօթքներուն և ետ դարձաւ։ Այնուհե-
տե աստուծոն պէս անգութ չեղաւ։ Հռոմը առաւ,
Սիկկիա անցաւ, տասը տարի ետքը, Աստուծոյ ար-
դար գաղափարանովը կորսնցուց թագաւորութիւնը և
կեանքը։

Ս. Բենեդիկտոս, ինչպէս կը պատմէ Ս. Գրիգոր,
իր աղօթքով բժշկեց բորոտ տղայ մը։ Նոյնպէս ա-
ռողջութիւն պարգեւեց մարգու մը որ թուրուոր-
ուած էր իր թշնամիին կողմէ։

Հայր մը, իր որդւոյն մահուան վրայ համակ
վշտով ու թախծով լեցուած, անոր դիակը կասկեայ
լեռը բերաւ, և ինչորեք Սուրբէն որ յարութիւն ապ-
անոր։ Ս. Բենեդիկտոս ուրիշ անգամ արգէն Աստուծոյ
ընդունած էր այսպիսի շնորհներ, սակայն խորին խո-
նարհութեամբ զգացումով մը տողորուած, աչքը ար-
ցունքով լեցուն, ըսաւ Եյն կրօնաւորներուն որոնց հեա
դաշտը աշխատելէ կը դառնար։ Հեռանալէ, կ'աղա-
չեմ, եղբայրներ, հեռանալէ։ Մեզմէ խնդրուած այս
գործերը Առաքեալներու յատուկ են եւ ոչ թէ մեզի
պէս սկար արարածներու։ Բայց գիւղացիս առանց միտ
դիելու անոր խօսքերուն թախտիկանքով կը ստիպէր
զանիկայ և երգումով կը պնդէր որ եթէ իր որդին
չյարուցանէ զանիկայ չպիտի թողու։ Ուստի Սուրբը
նախ մեռելին վրայ երկնցաւ, ետքը մէկդի քաշուե-
լով ձեռքերը երկինք վերցուց և ըսաւ։ Տէ՛ր, մի՛ նա-
յիր բնալ իմ մեղքերուս, այլ նայ՛ նաւասին այս
մարդուն որ իր որդւոյն յարութիւն ճաղ կը խնդ-
դարձնէր այս մեռած մարմնոյն հոգին եւ կեանքը որ
իմէ առնիր։ Այս խօսքերէն անմիջապէս վերջը հրաշ-
քը կատարուեցաւ։ Մեռելը սկսաւ շարժիլ և Սուրբը
զանիկայ, ձեռքէն բռնելով, ողջ առողջ յանձնեց հօրը։

Աստուած Սուրբին յայտնեց անոր մահուան ժա-
մանակը։ Որոշեալ օրէն վեց օր առաջ ըստալ տուաւ
այն գերեզմանը ուր կը հանգչէր իր քոյրը Սրբուհի
Սկովաստիկա։ Անմիջապէս անիդ մը եկաւ վրանս։ Հա-
կուակ այս հիւանդութեան, Ս. Բենեդիկտոս, որ
միշտ երկինքի բաղձանքով կ'աղբէր կը առչդէր, ամէն
տեսակ եռանդով և բարեպաշտութեամբ պատրաս-
տուեցաւ այս վերջին անցքին։ Վեցերորդ օրը, որչափ
ալ որ տկար էր, ինքզինքը Սուրբ Յովհաննէս Մկրտա-
չին բնօրէնութեամբ աղօթարարն տանիլ տուաւ։ Հոն, իր
աշակերտներուն բաղձանքներուն վրայ կ'ընծայ, Փրկչին
ամենասուրբ մարմինն ու արիւնը ընդունեցաւ։ Ապա
կանգ առնելով փոսին բերանը, սեղանին առջեւ, թեօ-
ւերը երկնք ուղղած, ոտքի վրայ, հուսկ յետին ա-

զօթք մը մընջելով՝ մեռաւ: Այս եղաւ 543, Մարտ 24ին, աւագ շաբաթ օրը, իր հասակին վաթսուներկու կամ վաթսուներեքերորդ տարին: Աշակերտները թաղեցին զինքը Սկստապետիկայի մօտ: Իր գերեզմանը կը գտնուի Կասսինոյ յերան արդի հեղեցւոյն աւագ խորանին տակը:

Կարելի չէ ըստ արժանւոյն ներկայացնել այն մեծ ծառայութիւնները, որ այս անզուգական Նախահօր Միաբանութիւնը 14 դարերէ ի վեր Եկեղեցւոյ մատուցած է և կը մատուցանէ: Նոյն Միաբանութեան շնորհիւ աշխարհիս մէկ մեծ մասը թողուց կառավարութիւնը, և ընդգրկեց Յիսուսի Քրիստոսի հաւատքը. անոր շնորհիւ քրիստոնէայ աշխարհին մնացած մասը պահեց նոյն հաւատքը, այն չարաղէտ ժամանակներուն մէջ, ուր գիտութիւնն ու բարեպաշտութիւնը կարծես միայն մենաստաններու մէջ մնացած էին: անկող լոկ, այնքան տարիներ, հանեց ոչ միայն գիտուններ, այլ նաև եպիսկոպոսներ, կարդինալներ և պապեր, անկէ վերջնապէս ելան այնքան աւաքելաշնորհ մարդիկ որոնք պարտեցան գրեթէ ամբողջ բնակեալ աշխարհը և անկէ վաշեցին հերետիկոսութեան և հեթանոսութեան մոլուածիւնը: Եւ զոն հաստատեցին հաւատքն ու առաքինութիւնը: Անթիւ անհամար են այս Միաբանութեան վանքերը ոչ միայն Եւրոպայի մէջ այլ նոյն իսկ Ասիոյ, Եթովպիոյ և ամենահեռաւոր երկիրներու մէջ: Այս Միաբանութիւնը, ժամանակաւ, բաժնուեցաւ այլեւայլ կարգերու, որոնք այս մեծ որթին պատուական շառաւիղներն են: Գլխաւորներն են Գլխւորի և Սիդոյի կարգերը: Այնքան բազմաթիւ Սուրբեր և Սրբուհիներ տուած է այս Միաբանութիւնը որ մարդ չի կրնար յիշել առանց հիանալու: Ասոնց գրեթէ հինգ հազարը Եկեղեցւոյ կողմէ պաշտօնապէս սուրբ հաստատուած են, իսկ մնացածները միջինաւոր են: Եթէ այս Միաբանութիւնը մէկ կողմէն Եկեղեցին ճոխացուցած է անոր տալով այնքան պատուական հովիւներ, միւս կողմէն ինքն ալ բարեբախտաբար ճոխացեր է ընդունելով իր ծոցը աշխարհի ամենէն աղին և օգոստոսական զաւակները: Ընդունած է կայսրեր և կայսրուհիներ, թագաւորներ և թագուհիներ, և առաջին կարգի աղնականներ, որոնք խնամք Բենեդիկտոսին աշակերտ ըլլալու համար ունակոյ ըրած են թողեր և պահներ:

Այս երանելի Նախահօր մարմինը կը գտնուի միշտ Ֆլէօրիս-սիւր-Լուաւ, ուր տարուեցաւ երբ Կասսինոյ լեռը ասպատակուեցաւ Լոմպարտացիներուն կողմէ: 1838ին Օռլէանի եպիսկոպոսը ուղեց Սուրբին մարմինը փոխադրել Սոլէսի վանքը ուր այնքան պայծառութեամբ կը ծաղկի Սուրբ Բենեդիկտոսի կարգը: Բայց Ֆլէօրիս ժողովուրդը մէկ մարդու պէս սոսքի ելաւ և դիմադրեց այդ գիտաւորութեան և թոյլ չտնաւ որ զրկեն զինքը այս գանձէն:

Վ Ե Ր Ջ

ԲԵՆԵԴԻԿՏԻՆ ԺԵ.

Կ'ընդունինք հետեւեալը.

Գիր. Դեոք վրդ. Թերզիպաշեան

Աստ

Հայ Կաթողիկէ հասարակութեան, Ս. Բահայայապետը ծանօթացնելու նպատակաւ իր կենացը մասին հակիրճ հաւաքածոյ մը ներփակ Զեզ կը ղրկեմ, եթէ դուք ալ ուղեւու ըլլաք կը հաճիք Արձագանգ թերթին մէջ ամփոփել:

Կանխիկ շնորհակալութեամբ
մասմ Զեդը.

ԱՆՏՈՆ Վ. ՄԿՐՏԻՉԵԱՆ

Կ. Պոլիս, 25 Սեպտ. 1914

ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԵ. Ս. ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ ԿԵՆԱՑ ՄԱՍԻՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԸ

Ս. Բահանայապետը ծնած է Իտալիոյ Զէնովա քաղաքը 1554 Նոյեմ. 21ին, և կոչուած է Յակոբ:

Հայրը՝ Զէնովայի Տէլլա Բիէզա աղնուական ցեղէն է¹, իսկ մայրը Միլիօրաթի աղնուական ցեղէն է, որ ժամանակին Եկեղեցւոյ ուրիշ Պետ մը եւս տուած է Գօգիմօ Միլիօրաթին, Բահանայապետ Իննովկենտիոս է. անունով 1404—1406:

Իրմէն մեծ եղբայր մը ունի Մարթիզ Յովնանէս Անտոն, իտալական դեր-ձովակալ (գօնթր ամիրալ), որ Հոռոմ կը բնակի Տիկին Մարթիզ Էօփէնի և Յովնէփ զաւակին հետ. և պղտիկ եղբայր մը Յուլիոս, ծովային ուսայ, առողջական պատճառներով հանգըստեան կոչուած:

Իսկ իրմէն անմիջապէս պղտիկ քոյր մը ունի, Ծուլիա, այրի տիկին Կոմս Բերսեգրիի

¹ Եւս Բիէզա ցեղին ծագումը Միլանական է, պատմաբանք սա յիշատակութիւնը կ'ընեն թէ երբ Ս. Ամբրոսիոս Լիկուրիոյ, Էմիլիոյի եւ Լոմպարտիոյ վրայ կ'իշխէր իբր հոգեւոր եւ ժամանակաւոր պետ, Արիոսեան աղանդին դէմ մաքառելու համար այլ եւ այլ զօրապետներ կարգած էր, որոնց մէջ կային նաեւ Միլանցիներ, որոնք վերջէն Եկեղեցւոյ Ախոյեան կոչուեցան եւ անկեց ալ Տէլլա Բիէզա մականունը ստացան. որոնք քիչ ատենէն Գոմօ, Թրէվիզօ, Մօնֆէրրաթօ, Ավինեօն, Պրանտէպուրկ, Սալօնա եւ ձեռնովա տարածուեցան: Գաղղիոյ մէջ ճիւղ մը Տր Լ'Եկիլիզ եւս կոչուեցաւ:

որ Վենետիկ կը բնակի երեք մանչ զաւակներու և մէկ աղջկանը հետ, որ Վենիէրի կոմսին հետ ամուսնացած է:

Ս. Քահանայապետը ձենովայի և ուրիշ խտրական քաղաքներու կոմս և Մարքիզի ազնուական շատ մը բնական քննիչու հետ ազգականութիւններ ունի:

Իրեն ցեղային զինանշանը և զրօշակը ունի, դեղին և կապոյտի վրայ կայսերական Սրծիւ մը թեւերը բացած և տարածած զոնդակատուով միասին Նիկողեցոյ վրայ՝ որ կրթնած է ութանկիւն աստղի մը վրայ և վարի կողմը կայ չորս խաչով ուրար մը¹:

Աշխարհական կրթութիւնը ձենովայի մէջ ստացած է և իրաւագիտութեան համալսարնէն պսակաւոր ելած 1875ին, 20 տարեկանին: Աստուածաբանութեան պսակաւոր ելած Հռոմայ Գաբրանիքա դպրոցէն, ուր քացած էր քահանայական ուսմանց հետեւելու համար:

Քահանայական կոչմանը համար հետեւեալը կը պատմէ Տիկ. Էօթէրի Տէլլա Քիէզա.

Երբ Յակոբ 12 տարեկան դպրոցական մըն էր, օր մը հօրը ներկայանալով կ'ըսէ. «Հայրի՛կ, ես քահանայ ըլլալ կ'ուզեմ»: Իսկ հայրը կը պատասխանէ. «Մտիկ ըրէ՛, զաւակս, տակաւին ժամանակ կայ մտածելու, հիմա աշխատէ՛ պսակաւոր ելլելու, յետոյ այդ մասին կը տեսնուինք»: Երբ անգամ մըն ալ բերանը չի բանար մինչեւ որ 20 տարեկան համալսարանէն պսակաւոր ելած օրը կրկին հօրը ներկայանալով 8 տարի առաջուան խոստումը կը յիշեցնէ որ այլ եւս չի կրնար մերժել:

1878ին Հռոմայ Եկեղեցական Ազնուականաց համալսարանը կը մտնէ, ուր իր մեծ տաղանդն ու հանճարը դեռ աւելի մեծ համ-

¹ Այս զինանշանը մաս կը կազմէ ձենովաի «Albergo Gentile» Salvago-ին 1488 թուականէն ի վեր, որոնց 28էն կը կազմուի ձենովաի Գատրիկութիւնը, եւ սոյն իտալական բառերը կը նշանակեն «Ազնուական Պանդոկ» ուր ձենովաի հին հասարակագիտութեան ժամանակ ազնուականք կը հաւաքուէին, իբր հաւաքոյթի, ժողովոյ եւայլնի տեղի:

բաւ կը ստանան, տակաւին իր դասընկերները զինքը կը յիշեն իբր ամենակարող եւ ամենախելացի, միտնդամայն և ամենափոյթ աշխատասէր: Քահանայ ձեռնադրուեցաւ 21 Դեկտ. 1878:

Նոյն ատենները Բրօքականտայի ընդհ. Քարտուղար Գեր. Ռամբոլլա Գերապայծառը երիտասարդ Տէլլա Քիէզայի վրայ տեսնելով ճշմարիտ ու բարձր եկեղեցականի հոգին և ամենամեծ զիւանագէտի տաղանդ մը, կ'ընդունի զայն իր մտերմութեան, և իր բարձր պաշտպանութեան տակ կ'աւելնէ. և երբ ամենափափուկ պաշտօնով մը իբր Սպանիոյ Կոնքալ Մատրիտ կը մեկնի, Տէլլա Քիէզա անոր կ'ընկերանայ իբր քարտուղար, (1883 Յնվ.) ուր մեծ ծառայութիւններ և օգնութիւն կը մատուցանէ Գեր. Ռամբոլլայի, մանաւանդ Գերմանիոյ և Սպանիոյ մէջ եւ քունուող Դարօլինեան մեծ և ամենածանր խնդիրներու մէջ, որոնց վրայ երջանկայիշտական Լեւոն Ժ. Բացարձակ իրաւարար կարգուած էր երկու պետութիւններէն: Գեր. Ռամբոլլա Լեւոն Ժ. ի կողմէ Քահանայապետական Գետական ընդհ. Քարտուղարի պաշտօնին կը բարձրանար 1887ին: Տէլլա Քիէզա, որ ի Սպանիա այնչափ լաւ ծառայած էր իր պաշտօնին մէջ, ոչ թէ միայն կատարեալ վստահութիւն կը վայելէր Վսեմ. Ռամբոլլայէ, այլ և կը յարգուէր իր մեծ առաքինութեանց, ձիրքերուն և շատ իմաստուն ուղղութեանցը համար: Միեւնոյն անձնական քարտուղարի պաշտօնով իր փոխադրուի ի Վատիկան Վսեմ. Միլանաւորին քով: Քանի մը տարի վերջը՝ Յակոբ Տէլլա Քիէզա Գեր. Թրիքէթի կը յաջորդէ իբր օգնական կամ խորհրդական (Sostituto) Վսեմ. Կարդ. Ռամբոլլայի, (1901 Սպր.) ուր իր փայլուն զիւանագիտութեամբ և ժրջան աշխատութեամբ մեծ ծառայութիւններ կը մատուցանէ, իւրացնելով միանգամայն Լեւոն Ժ. Քահանայապետին, ինչպէս նաեւ վսեմ և իմաստուն Ռամբոլլայի բարձր եւ իմաստուն զիւանագիտութիւնը, որոնց մեծ հետեւող մըն է ինքը: Այս պաշտօնը շարունակեց նաեւ Պիոս Ժ. Քահանայապետին առաջին 5 տարիներուն և Կարդ. Մէրի տէլ

Վալի քով, որ Ռամբուլայի յաջորդած էր հակառակ իր երիտասարդ հասակին: ¹

Եւ երբ վսեմ. Ծիրանաւոր Ձվամբայի մահուամբ թափուր մնաց Պոլոնիոյ Աթոռը, Գեր. Տէլլա Քիէզա, ի վարձ իւր արժանեաց և քահանայական առաքինութեանց, նոյն երեւելի Աթոռին վրայ Արքեպիսկոպոս անուանուեցաւ 16 Դեկտ. 1907ին, ու նոյն ինքն Պիոս Ժ. Քահանայապետին կողմէն Վատիկանու Սիւթինեան մատրան մէջ ձեռնադրուեցաւ 21 Դեկտ. ին:

Հազիւ իր Աթոռը հասած, փութով հովուական պաշտօնին կը ձեռնարկէ և հոն ալ քաջասրտութեան և հաստատակամութեան, նկարագրի և փայլուն ու վստահելի ուղղութեան աէր ըլլալը ջոյց կուտայ առաջին վայրկեանէն, առաւօտեան ժամը 5ին ելլելով և կէս գիշերէն առաջ չափակելով միշտ և անընդհատ կ'աշխատի, նոյն իսկ հիւանդութեան ատեն:

Իր նոր ուղղութիւնը տեղական կղերը կը յեղաշրջէ, և ղեռ չատեր կը յիշեն իր սա գեղեցիկ կտրուկ խօսքերը՝ statu quoի հափազանք բարեկամներ ներկայացող վախկոտ խորհրդատուները իրմէն հեռացնելու համար. «Անցեղոյն մեջ աշրպիս կ'ըլլար. քայց անցեալը ձգենք ուր որ է, մտածենք ներկային վրայ»:

Վերջին աստիճան հոգածու և եռանդուն եղած է քահանայական պաշտամանց և եկեղեցական արարողութեանց, նմանապէս եկեղեցեաց վերջին ծայր մաքրութեան համար

¹ Եւրոպայի քանի մը ազատական եւ բողոքական Թերթերը, ըստ իրենց սովորութեան, սուտ սխալ յերկրանք հրատարակած էին, իբրեւ Թէ կարդ. Մէրի Տէլ Վալ՝ հանգուցեալ կարդ. Բամբուլայի քաղաքականութեան հակառակելու համար Մօնս. Տէլլա Քիէզայի եւս խեթիւ նայած ըլլայ, ենթադրութիւն՝ որ բացարձակապէս հակառակ է ճշմարտութեան: Սակայն ցաւալին այն է որ տեղւոյս հերձուածող Թերթերը մըքմամբ իւրացուցին այդ տխուր վրայաբերութիւնները, եւ ներկայացուցին զանոնք՝ աշխարհային ոգւոյ տիրապետող միջավայրերուն կրից արդիւնքին պէս. մինչդեռ Պիոս Ժ. ի շուրջ ամենայն ինչ սրբութիւն կը բուրբեր, եւ արդէն աշխարհի քաղաքականութիւնը եւ կրթը չէ որ կը տիրէ ի վատիկան, ինչ որ ալ յերկրեան եւ գոյաբարտեան անճշմարտասէր հակառակորդ եւ բանսարկուք:

յանձնարարութիւններ միշտ անպակաս ըրած է, այս մասին նշանաւոր են հետեւեալ խօսքերը. «Վալ եթէ եկեղեցիները անսխալութեամբ տեսնեն»:

Իր թիմին եւ ժողովրդապետութեանց վրայ հօր պէս կը գուրգուրայ և կը սիրէ եւ չի թողուր որ արտաքին ուռէ ազդեցութեան ենթարկուին ինչպէս որ խնդրի մը համար ըսած է. Ձեռ ուզեր որ ուրիշ ոչ մի անձնաւորութիւն կամ իշխանութիւն իմ թեմական գարծնուս խառնուիմ՝ քացի Քահանայապետին: Թեմական այցելութեանց ելլելէ առաջ ժողովրդապետաց իւրաքանչիւրին նամակներ կը գրէր որպէս զի իրեն յատուկ աշխատութեան սենեակ մը յարդարեն եւ քննուելիք գործերը պատրաստեն այնքան լաւ որքան կարելի է, որոնց միշտ մօտէն տեղեակ ըլլալ կ'ուզէր եւ որոնցմով վերջին ծայր կը հասաքրքրուէր:

Վերջին աստիճան ողորմածասէր եղած է եւ ղէպի աղքատս ողորմութիւնը անպակաս ըրած է, 40,000 Քր. ի ժառանգութիւն մը այդ գեղեցիկ գործին նուիրած եւ ողորմութիւն տալու ալ ուսուցիչ եղած է: Օր մը որ իր սենեկապանները աղքատ մը խիստ երկար ատեն դուռը սղասցուցած էին, ըսաւ. Սա նուէրը տարեք այդ մարդուն, վասն զի երկար ասեմեկ ի վեր կը սպասէ: Ծառան կարմրելով ըսաւ. Բայց, Դերապայծառ, կարծեցի թե... Տէլլա Քիէզա արքեպիսկոպոսը կրկնեց իսկոյն. Դուք պե՛տք չեք դասել, այդ ինծի կ'իյնայ. եթէ դուք անօթի ըլլայիք անոնց նման կ'ըլլայիք: Ուրիշ անգամ մը հովուական այցելութեան ատեն, երբ փառաւոր կերպով պատրաստուած սեղանին առջեւ կը բազմի եւ երկրորդ կերակուրէն ետքը տեսնելով որ դեռ չատ մը գալիք կերակուրներ կան, ժողովրդապետին դառնալով կ'ըսէ. Ձեր թեմին մեջ աղքատներ չունիք:—Շահ, կը պատասխանէ ժողովրդապետը, կարծելով թէ անոնցմով հետաքրքրուել կ'ուզէր. բայց սա պատասխանը կը ստանայ. Ձեր կերակուրներէն դասելով ինծի աշրպիս չ'երեւիր. ուստի ասկեց վերջը գալիք կերակուրները անոնց քայքայեցիք:

Արհի. Տէլլա Քիէզա Արք. Ը իր այնքան

տօնապէս ի ծոց Ս. Եկեղեցւոյ, իր դարձը —
յայտնի է — ընդհանուր ուրախութիւն պատ-
ճառեց մանաւանդ իր բարեկամաց, որոնք
այնչափ աղօթած էին իրեն համար. ի մաս-
նաւորի յանձնելով զայն հրաշագործ և ամե-
նազօր Կուսին բարեխօսութեան որ իրաւամբ
կը կոչուի. «Մայր ողորմութեան և բարի
խորհրդոյ, Ապաստան մեղաւորաց, Դարձու-
ցիչ մոլորեցոյ և Փրկչակից մարդկային աղգի»:

Նոր քրիստոնեայն դիտէր թէ սրչափ կը
պարտէր հրեշտակաց Թաղուհւոյն, ուստի եւ
առ երախտագիտութեան աւելցուց անոր
պաշտելի անունը իր երկու անուանց և կոչ-
ուեցաւ Մարիամ-Պօղոս-Յովսէփ:

Իր գեղեցիկ մտաւանդ՝ ամէն տեսակէտով
արժանի է ընթերցման, մանաւանդ առ մեզ,
ուր զարաւոր նախապաշարունակներ, հին ու
փառած առարկութիւններ կը նորոգուին զտ-
նազան ձեւերով, և միամիտ ժողովուրդը
խաբելու, անխորձ ու թերուս երիտասար-
դութիւնը ապականելու կը նկրտին:

Հակաքրիստոնէական տեսլութեան մէջ
ծնած ու անած, սկեպտիկութեան և անկրօ-
նութեան վերջին սահմաններուն հասած Հրք-
եայ մըն է, որ գերմարդկային գեղեցկութեան
առջեւ կը զմայլի, անվրէպ Ճշմարտութեան
առջեւ զինաթափ կ'ըլլայ, զարաւոր Բարե-
բարութեան առջեւ կը յուզուի սիրով և շը-
նորհակալութեամբ: Հայհոյիչ Սօզոս մըն է որ
նոր Դամասկոսի մը ճամբուն վրայ կ'իյնայ
մտքի ու սրտի վէրքերով ծածկուած, եւ կը
կանգնի քաջառնով քրիստոնեայ, խանդա-
վառ հաւատացեալ եւ բոցաշունչ, հրալեզու
առաքեալ մը նոր հեթանոսներու:

Մեր սոյն համեստ յօդուածներու շարքը
չենք ուզեր վերջացնել, առանց յիշելու տա-
ղանդաւոր հեղինակին մի քանի խորհրդա-
ծութիւնները ևս, որոնք ուժգին յանդիմա-
նութիւն մը պէտք է նկատուին անարժան
ուղղափառներու եւ ապաշխար քրիստոնէից,
զորս քսան դարերու անապառ բարիքներ,
անհաշուելի զոհողութիւններ, անսահման
ծառայութիւններ եւ ամենազգի դիւցազնու-
թիւնք չեն կրցած, տիրո՞ս, յուզել, խան-
դաղստել, լուսաւորել, իմաստնացնել, եւ

յորդոր մը ըլլալ սիրոյ, յարգանաց և սքան-
չացման:

«Ճշմարտութիւնը դոյութիւն կրնայ ու-
նենալ եւեթ միութեան և կաթողիկէութեան
մէջ»:

«Հրեաթիկոսութիւնք կ'իյնան ու կ'անց-
նին. Եկեղեցին կը մնայ յաւիտենապէս»:

«Զինուորեալ Եկեղեցին՝ անմեղանչական չէ,
վասն զի Աստուած չի վերցնէր անկէ իր ա-
զատութիւնը: Բայց չի կրնար մեռնիլ, ու-
րովհետեւ իր աստուածային մասին մէջ դերձ
է Սատանին իշխանութենէն, անապական է,
և Յիսուսի Քրիստոսի Հարսն է»:

«Ահ, Լուսե՛ր, չտեսար զուցէ կանխաւ
քու սկզբունքիդ տրամաբանական հետեւու-
թիւնները: Ազատ քննութիւնը կը յանգի ա-
զատախոնութեան և ազատախոնութիւնը կը
յանգի անիշխանութեան»:

«Անհաւատներ՝ զուք հրաշքը կ'ուրա-
նաք: Ուրացէ՛ք ուրեմն եթէ կրնաք Եկեղեց-
ւոյ հրաշքը որ կը յաղթանակէ համայնածախ
ժամանակին, կը յաղթանակէ իր անթիւ
թշնամեաց»:

«Միծաղի՛նք այս հպարտներուն, այս կոյ-
րերուն վրայ, Գոմպերու, Պրիաններու, Դէ-
մանօններու և ասոնց նմաններուն վրայ, կամ
մանաւանդ, կարեկի՛ց ըլլանք անոնց: Ասոնք
մեռած պիտի ըլլան երբ Եկեղեցին պիտի եր-
գէ աջն ատեն տիրող Քահանայապետին: «Պա-
տի՛ւ եւ փա՛ռք Պետրոսի, Անտիպալին, Աս-
տուծոյ Փոխանորդի՛ն»:

«Նոր Յուդաներ հոն ալ կը սպրդին նոր
առաքեալներու մէջ և կը մատնեն իրենց առ-
առածային Վարդապետը»:

«Արիոսէ մինչեւ Լուսգի, ամենէն նենգա-
միտ ու ամենէն վտանգաւոր յարձակումները
կրեց եկեղեցին իր իսկ որդւոց կողմէ»:

«Աստուածային անէճքը մեր վրայ է: Այլ
եւս չենք Աստուծոյ Իսրայէլը. ընտրեալ ցե-
ղը, Այլ եւս չենք հասկնար մեր նահապեա-
լները, մեր մարգարէները: Առաջատու մը ձեռ-
ուած է մեր աչքերուն առջեւ, մեր մտքին
վրայ, մեր սրտին վրայ, առաջատու մը ար-
եւոն. Արգալին Արիւնն է այն»:

«Եկեղեցւոյ մէջ գտայ ընապանցական

հշմարտութիւն, բացարձակի տանջանքը կրող մտքիս անդորրութիւնը։ Աստուածաբանութեան բարձունքէն՝ փիլիսոփայութիւնը ինձ կ'երեւին ճղճիմ, սոյնչափ անձուկ իրենց դրութեանց մէջ։»

«Մինչեւ այն օրը յորում կաթողիկէ եղայ հոգևոյս մէջ կար կռիւ, պատառում»

* *

Ի՞նչ դասեր նորադարձ հրէի մը բերնին մէջ, Երանի՛ մեզ, եթէ ուզենք օգտուիլ անոնցմէ։

Ո . Կ . Ա .

31 Մայիս, 1911

Վ Ե Ր Ջ

ՍԵՆՏԵՄԲԵՐ

ԿՐԾՆԱԽՈՐՆԵՐԸ ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ. — Յըրանական զօրաշարժին առաջին օրէն իսկ բաղմաթիւ կրօնաւորներ իրենց կարգին համալսարանով փութացին զօրանոցները եւ արտաքոյ կարգի խանդավառ եւ համակրական ցոյցերով ընդունուեցան ամէնուն կողմէ։ «Երբէք չպիտի մոռնամ, կը գրէ Ֆրանչիսկեան մը, զօրանոց մասած օրս։ Բոլոր սպաները քովս փութալով ողջունեցին զիս յարգանքով։ Զինուորները զիս իրենց դունդին ժողովրդապէս անուանեցին։ Տեղակալ մը մօտեցաւ եւ հարցուց ինծի. «Հայր, արդեօք զինուորական համազգեստ հագնելնէդ վերջն ալ պիտի կարենա՞ք խոստովանանք լսել»։ — Այո՛, պատասխանեցի։ — «Շատ աղէկ, ըսաւ տեղակալը, արձանագրեցէ՛ք զիս»։ Դէպի ռազմավայր մեկնելու առեւ, սպայ մը խոստովանանք եղաւ կայսրանի սպասման սրահին մէջ»։

Ուրիշ մը կը գրէ. «Մեզի արտայայտուած համակրական ցոյցերուն նկարագրութեանց մէջ բնաւ չափազանցութիւն չկայ։ Մի քանի երիտասարդ Վեղարաւորներ իրենց սքեմովն ու սանդալովը բանակը մտան, եւ իրանդավառօրէն ծափահարուեցան։ Դրեթէ բոլոր պատերազմի գաղղները կը խոստովանին»։

Արեւելեան ամրոցի մը մէջ, քահանայ մը

հանգստեան ժամուն ժամագիրքը ձեռքը, աղօթած առեւ զինուոր մը կը մօտենայ իրեն եւ կ'ըսէ. «Ժողովրդապետ էք. կը խնդրեմ խոստովանեցէ՛ք զիս»։

Ուրիշ տեղ մը զօրքերը շրջապատելով երիտասարդ Ֆրանչիսկեան մը կը խնդրեն որ «Պերեւեշտը անիլէ, որպէսզի աւելի դիւրաւ կարենան զինքը ճանչնալ եւ դիմում ընել իր պաշտօնին»։

Քահանայ եւ կրօնաւոր զինուորներու ցոյց տրուած այսքան համակրութիւնները կը հաստատեն անգամ մը եւս թէ Յրանսայի մէջ կրօնական զգացումը թմրած էր միայն եւ հիմայ կը վերազարթնու առոյգօրէն։

ՅԱՌԱՋԱՊԱՆԵՐՈՒ ՍՈՍԿԱԼԻ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ. — Պատերազմը սոսկալի է, կը գրէ ձիաւոր մը, չորրորդ ձիս ալ սպաննուեցաւ։ Դէմքս սեւցած է, բազուկներս ծակ ծակ եղած են նետերէ, բայց վէրքերէս եւ ոչ մին մահացու է, եւ ոչ մին զիս անդործութեան կը մատնէ։ Տակաւին տոկուն եմ, թէեւ շատ պարտասած։ Երէկ իրիկուն կարծեցի թէ վերջին ժամս հասեր է, բայց եւ այնպէս ողջ առողջ ելայ արիւնալի կռուէ մը. չորս ժամ պառկած զէնք պարպեցի։ 192 գնդակ նետեցի. ձեռքերս այրեցան։

Իրիկուն ժամը ինչ, բուն ընդհարում մը սկսաւ, ես նետ մը իսկ չարձակեցի. այլ ամէն կողմ ձի մը վնասեցի սպաննուած ձիս փոխանակելու համար։ Վերջապէս մահացու կերպով վիրաւորուած գերման հեծեալ մը տեսայ, անոր սաղաւարտը, ոտըր եւ ձին առի։ Պիտի կարենամ արդեօք այս յաղթութեան նշանները Բարիզ բերել։ Կը յուսամ։ Այս տուրը գրած պահուս թնդանօթը որոտաձայն կը գոռայ։ Ռումբերը սոսկալի են։ Բրուսիացիները մահուան կը մատնուին անհաւատալի դիրքերու մէջ։ Զէնքը ձեռքերին կանգուն կը մնան։ Այս ամէնը ձեզի պիտի բացատրեմ ապա՝ կենդանի ձայնով։ Կ'երեւի թէ Մէօզ գետը պիտի կնկնեք լեցուն է։ Հոս այլեւս խոտ չի տեսնուիր. գաշտերը ումակներու կտորներով լեցուած են։ Մեր լաթերը տղմով բծաւորուած իսկ, մեր ձեռ-

քերը արիւնով թաթիւում են : Գնդակները ամէն կողմէ կը սուլին , եւ ես կ'անցնիմ : Մահը ինծիմէ կը փախչի՝ արդեօք : Է՛հ , թե-
րեւս վերջին հրաժեշտս կու տամ՝ ձեզի : Այսօր մահուան տնիցափ մօտէն անցայ : Բա-
նի անգամ ըրի . «Աստուած իմ , հոգիս քեզի
կը յանձնեմ» :

ՅՈՒՁԻՉ ՀԱՆԴԻՍ ՄԸ .— Էֆօ քը Բառի
կը գրէ Սեպտ . 10ին .— «Երէկ իրիկուն Սէն
Մանտէնի օթանդակ հիւանդանոցին մէջ իրա-
պէս յուզիչ արարողութիւն մը տեղի ունե-
ցաւ : Տասնը ինը վիրաւոր մէկ քանի օր ան-
ցուցեք էին հիւանդանոցին մէջ , եւ իրենց
յատուկ զինուորական կեդրոնները պիտի
դրկուէին : Յայտնելու համար թէ ո՞րքան
երախտապարս են այն անձնուէր խնամք-
ներուն համար , որոնցմով շրջապատեցին զի-
րենք Սէն Վէնսան ար Փօլի մայրապետները ,
քնքոյշ զաղափարն ունեցան անոնց մատու-
ցանելու փունջ մը : Խնդիրը կարգադրուե-
ցաւ իրապէս ֆրանսական փափկանկատու-
թեամբ մը , մինչեւ վերջը զաղտնի պահուե-
լով , որով իտրունկ յուզումով մը համակուե-
ցան այն մէկ քանի առանձնաշնորհաւններն
որ ներկայ էին այս զուտ մտերմական արա-
րողութեան : Հրք անթաքուպիւրու կոթնած
վիրաւորներէն մին՝ Գնդ . Մաղէլ զուրս հե-
կաւ իր ընկերներուն մէջէն եւ յիշատակի
ծաղիկները մատուցց մայրապետներուն պետին՝
անոր յայտնելով յանուն ամէնուն խորունկ
շնորհակալութիւն : Մայրապետը յուզուել
խօսքերով շնորհակալութիւն արտայայտեց ,
յետոյ ճաշ արուեցաւ վիրաւորներուն : Զա-
շէն ետքը Սէն Մանտէնի Կարմիր Խաչի
յանձնախումբին երիցապոյն անդամը , Մեք-
սիկայի ու Ափրիկէի պատերազմներուն մաս-
նակցած նախկին զինուոր մը , որ ստացած է
Մեքսիկայի ու 1870ի պատերազմներուն
չքաղրամը , լառօջ եկաւ ու ներկայացուց
ազգային պատգամ . փողահար ավերիկեան զինուոր
Տիրազի Մէհմէտ որ վայրկեան մը իսկ չէր
ուզած բաժնուիլ իր շեփորէն , զրօշի ողջոյ-
նը հնչեցուց , ամէն ոք գլխարկը հանեց ու
մինչ վիրաւորները հպարտօրէն կը ցցէին ի-

րենց իրանները , շատերուն աչուքները լեց-
ումած էին արցունքով : Մեկնումը տեղի ու-
նեցաւ «Կեցցէ՛ Յրանսա , կեցցէ՛ բանակը ,
կեցցէ՛ Կարմիր Խաչը» աղաղակներով : Վի-
րաւորներէն շատերը տարուեցան Նանթ ,
բայց իրենցմէ մէկը այնքան տկար էր որ
չէր կրնար ատկալ այնքան հրկար ճամբոր-
դութեան մը յոգնութեան , ուստի շատ պըն-
դեց որ ձգուի մայրապետներուն վարած հի-
ւանդանոցը : Ասիկա ամենէն պեղեցիկ գո-
վեաւոր չէ՞ միթէ , զոր կարելի ըլլայ տալ այս
այնքան համեստ ու անձնուէր Բոյրերուն :

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ .— Բենեդիկ-
տոս ԺԵ. Ս. Քահանայապետը Սեպտ. 19ին հանդի-
սուար ունկնդրութեան ընդունեցաւ Ն. Վ. Տէրու-
թիւն Տ. Օթմ Գոն Մուէհպէրկ , Սուրբ Աթոռին
մօտ Բրուսոյ տարածքոյ կարգի պատուիրակը եւ լիա-
զօր Պաշտօնեան :

Ունկնդրութիւնը տեղի ունեցաւ Գահարահին
մէջ , ուր Ն. Վ. Տէրութիւնը ընդունեցաւ , ըստ
սովորութեան , շքեղ արարողութեամբ , եւ Ն. Սրբու-
թեան ներկայացուց իր նոր վկայագրերը հակիրճ բա-
նաստութեամբ մը , որուն պատասխանեց Սրբապան
Քահանայապետը՝ շնորհակալ ըլլալով անոր արատայ-
տած ազնիւ զգացումներուն համար եւ գոհունակու-
թիւն յայտնելով Ս. Աթոռին մօտ անոր պաշտօնին
շարունակման համար :

Ապա Ս. Հայրը հրաւիրեց Ն. Վ. Տէրութիւնը իր
սենեակը , ուր քիչ մը տտեն առանձին խօսակցեցան :
Ն. Վ. Տէրութիւնը ընկերակցութեամբ Գաշիա-
Տովմիմի Գերապայծառին , Արարողական Ս. Փողովի
քարտուղարին եւ ուղեկցութեամբ Զուլցերիական պա-
հակապետին , անցաւ քահանայապետական տպա-
րանքին սրահներէն , ուր զինուորական պատիւներ ըն-
դունեցաւ քահանայապետական այլեւայլ պահակա-
խումբերու կողմէ , եւ գնաց այցելութիւն տուաւ պե-
տական քարտուղար Վ. Եմ . Տ. Ֆէրրադա Կարդինալին :

ՀՈՐ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ .— Հոգ-
տեմեր 7ին Պեդիգոյի դեսպան Մ. Մոնչէօր , Ամե-
նագաւառ Գերեթաւիկ Հոգեւոր Տիրոջ այցելութեան
եկաւ , եւ կէս ժամի չափ Ն. Գերեթաւիկութեան հետ
սիր սիր խօսակցութիւն մը ունեցաւ :

* Հոկտ. 8ին , Անտառա Յղութեան կարգին
Ընդհ. Մեծաւորուհի Մայր Պրիճիտայի տնուան տա-
րեղարմին առթիւ , Ամեն Հոգեւոր Տէրը պատարա-
գեց Մայր-Վանատան մատրան մէջ եւ օրուան պատ-

շաճ մի քանի խօսք խօսեցաւ։ Ապա՝ ընդունելութեան սրահին մէջ տեղի ունեցաւ ընտանեկան փոքրիկ հանգէս մը։ Եւ, Գերերջանկութիւնը ալցելէց յետոյ Որբանոցը և հազելից խօսքերով մխիթարեց այն տեղ պատրաստուողները և քաջալերեց հոն աշխատող Առատքինի Բոյրերը։

ԵՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Հոկտեմբեր 3ին Գոնիայի նահանգին մէջ աղէտայի երկրաշարժ մը տեղի ունեցաւ. այս մասին Մամուլի Դիւանը հետեւեալը հաղորդեց.

Հոկտ. 3ին, շաբաթ օր, կէս գիշերին երկրաշարժի խիստ զօրաւոր ցնցումներ զգացուեցան Գոնիայի նահանգին Պուրտուր ու Սպարթա քաղաքներուն եւ շրջանակներուն մէջ։ Ազշէհիւրի եւ Սէյ-տիշէհիւրի քաղաքներուն ու Գոնիայի մէջ տեւալիսն բռնուն ցնցումներ զգացուեցան, սակայն նիւթական կորուստ չպատահեցաւ։ Սպարթայի մէջ 5500 տուններէն 3000ը ամբողջովին փլան եւ մնացածներն ալ անբնակելի են։ Նոյն քաղաքին եւ գաւառին գիւղերուն մէջ մեռեալներուն թիւը 1500 եւ վիրաւորներունը 100 է։ Ալաշէհիւրի մէջ առջի գիշեր ցնցում մը տեղի ունեցաւ, բայց վնաս չպատճառեց։

*, Թանին իր Հոկտ. 9 թուին խմբագրականին մէջ խօսելով Ռուսիոյ Զարին կողմէ Հայերուն ուղղութեամբ կոչին վրայ, նման պատերազմին սկիզբը Բոլորիցիներուն ուղղութեամբ կոչին, կ'ըսէ թէ Օգոստոս 27ին կովկասի փոխարքան Թիֆլիզի հայ երեւելիներուն հաղորդած է յիշեալ կոչը։

*, Պոստայ Աւստրաւմաճառ զինուորական կցորդը Հոկտ. 6ին կը հրատարակէ հետեւեալ գելոյցը. — Գերման և աւստրաւմաճառ ոյժերուն արագ յառաջխաղացումը ռուսական Լեհաստանի մէջ, կ'երեւի թէ յանկարծակիի բերած է Ռուսերը, որոնք կալիցիայէն կարեւոր ոյժեր զրկեցին գէպի ի հիւսիս, բայց զինակիցներուն կողմէ ետ մղուեցան, երբ փորձեցին անցնիլ Վիսթուլայէն, Օբաթովի ուղղութեամբ։ Մեր

զօրքը գրաւեց Սանտոմիրի կամուրջի գլուխը։ Կալիզիոյ մէջ յառաջ գացինք ըստ մեր յառաւարդին։ Ի Թալիսոյրդէ կ'առնու հետեւեալը քիչ զօրաւոր մը ետ մղուեցաւ մերիններուն կողմէ։

*, Ռուս ընդհ. սպայակոյտը կը ծանուցանէ Հոկտ. 7ին. — Արեւելեան Բրուսիոյ սահմանին վրայ գերման զօրքը օգնական ոյժ ստացաւ Քէօնիկսպէր-կէն, եւ կը շարունակէ յամառ դիմադրութիւն մը ընել Վլասիսլավովոյ — Ռաշքի գծին վրայ, օգտուելով հողի առաւելութիւններէն, զորս իրեն կ'ընծայեն Զէրնօկանիայի հողամասին ճահիճներուն կիրճերը։ Վիսթուլայէն անդին յառաջապահ կռիւներ կը մղուին Օբաթով — Սանտոմիր հողամասին մէջ։ Քարբաթի մէջ Սանօք գետին արեւմտակողմը աւատը, ջոկատ մը պարտուեցաւ եւ կորոյս խորտընկէցներ ու գերիներ։ Նոյնպէս Սոլիվայի մօտ, 20 քմ. հեռու Մոնըքայէն (Հոնդարիս) ռուս զօրքերը գրաւեցին հրետանիներ եւ բազմաթիւ փոխադրախուժեք ռազմականութիւն։

Ռուս ընդհ. Հիւպսուսարմ

*, Բարիդ, 7 (Պաշտօնական). — Ֆրանսական ձախ թեւին վրայ ճակատամարտը կը շարունակուի ամենայն ստակութեամբ։ Գեմալիի մօտ գտնուող ճակատները կը տարածուին մինչեւ Լան, Պասէ և Պէթիւն և կ'երկարաձգուին հեծելազօրաց զանգուածներով սրտը իրարու հետ կ'ընդհարին Աւստրիական ժողովին մէջ։ Ռուսներն Մէօզ երկարող ճակատին վրայ նշանակելի բան մը չկայ։ Վէօվուի մէջ Ֆրանս. զօրաց յառաջացումը կտսեղնուի համար Գերմանիոյ նոր ճիգ մը փորձեցին որ ձախողեցաւ։ Թշնամին մեծ կորուստներ ունեցաւ։

*, Անգլ. պատերազմ. նախարարութիւնը կը ծանուցանէ Հոկտ. 8ին թէ Էնի և Լանի հիւսիսակողմը ռազմին կռիւներ կը մղուին։ Արդէն փոխադարձ արար յառաջ կը խաղանք և կը նահանջենք ամբողջ գիծին վրայ։ Ստացուած տեղեկագիրներ ընդհանուր առմամբ նպաստաւոր են։ — Անվէրսի վրայ յարձակող Գերմանիները առաջացուցին իրենց դիրքերը, պահապանութիւն զգալի գիմադրութեան բաղիւնով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դեպքեր եւ սկզբունքներ	641
Յիսուս Քրիստոս	646
Եօթնեակ Քրիստոսնէի	648
Բենեդիկտոս Ժ.Ե.	649
Հաւատքի մի նոր յաղթանակ	652
Ալլելույա	654
Տեղեկագրական	655

ԱՐՏՆԱՏԵՐ

ՅՈՎ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՆՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— Թուրքոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20.— մէկ թիւ՝ 1 դհկ. —Արտասահ-
ման տար. ֆր. 10. վեցամս. 5.— Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.
Պոչիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրատեղւոյն:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթի մէկ կողմը շմի-
ւոյն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն:

Տէր Կոմիտաս Քահանային վարըր. գին 5 դհկն:

Եսթեր՝ ողբերգութիւն Ռասինի: Գին 3 դահեկան:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Այլ տպուին ամեն տե-
տակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարտեր, քարդ-ատրէաներ,
մահազգներ, եւն. եւն. Գիները անմրցելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ-պիտի
ենան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

Vienne I. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegerndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prosnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Stanislaw, Tarnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège à Galata, Place du Pont de Karakeuy

Agences à Stamboul, Péra et Scatari.

Le Wiener Bank-Werein fait toutes opérations de Banque et notamment :

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Paiements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat et vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ $\frac{0}{0}$ d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.